

# ՍՍՌՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ Հ Ր Ա Մ Ա Ն Ա Գ Ի Ր Ը

## ՔԱՓԱՌԱՇՐՋԻԿ ԳՆՋՈՒՆԵՐԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆԵՐԳՐԱՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քոչվոր գնչուներին աշխատանքով ապահովելու, նրանց կենսապայմանները բարելավելու, կուլտուրական մակարդակը բարձրացնելու ուղղությամբ Սովետական պետության ձեռնարկած միջոցների շնորհիվ նրանց մեծամասնությունն անցել է աշխատանքային նստակյաց ապրելակերպի: Բայց մինչև այժմ գնչուների որոշ մասը շարունակում է զբաղվել թափառաշրջիկությամբ, վարում է մակաբուծական կյանք և հաճախ հանցագործություններ է կատարում:

Թափառաշրջիկ գնչուներին հանրագուտ աշխատանքի ներգրավելու նպատակով ՍՍՌՄ Գերագույն Սովետի Նախագահությունը որոշում է.

1. Գնչուներին արգելել զբաղվելու թափառաշրջիկությամբ և նրանց առաջարկել անցնելու աշխատանքային նստակյաց ապրելակերպի:
2. Միութենական ռեսպուբլիկաների Մինիստրների Սովետներին պարտավորեցնել միջոցներ ձեռնարկել թափառաշրջիկ գնչուներին մշտական բնակության տեղավորելու, նրանց աշխատանքով ապահովելու և կուլտուր-կենցաղային սպասարկման համար:
3. Սահմանել, որ շափահաս գնչուները, որոնք չարամտորեն կխուսափեն հանրագուտ աշխատանքից և կզբաղվեն թափառաշրջիկությամբ, ժողովրդական դատարանի վճռով պատժվում են մինչև հինգ տարվա քստորով՝ ուղղիչ աշխատանքներով հանդերձ:

Այս գործերի քննությունը պետք է կատարեն միլիցիայի օրգանները՝ միութենական ռեսպուբլիկաների քրեական-դատավարական գործող օրենսգրքերին համապատասխան:

ՍՍՌՄ Գերագույն Սովետի Նախագահության Նախագահ՝ Կ. ՎՈՐՈՇԻԼՈՎ

ՍՍՌՄ Գերագույն Սովետի Նախագահության Քարտուղար՝ Ա. ԳՈՐԿԻՆ

Մոսկվա, Կրեմլ

5 հոկտեմբերի 1956 թ.